5. ԶԱՆԳԻ-ԶՐԱՆԳԻ

Կէղնի չի էղնի մե գեղիմ մեջ քյասիբ մարդմ կէղնի։ Էդ մարդը կունենա մե տղեմ, մեկ էլ իրեք ամսկան ախչիկմ։

Օրվա մեկը էդ մարդու կնիկը թնդիրը վառե կը, հացը դնղե կը, դելնի դուս ջուր թափելու։ Էդոր տղեն թնդրի քովը նստած կէղնի, ախչիկն էլ օրոցքը։ Մեկ էլ տղեն տեսնի կոր ախչիկը հ'ելավ օրոցքից, էդ գնդերը կերավ ու գնաց նորից պառկավ։

Տղեն մաթ մնաց։ Մերն էկավ, մորը էն սհաթին խապար տվեց, ըսավ.

— Մայրիկ, ախչիկը հ'ելավ, գնդերը կերավ։

Մերը չհավատաց, հ'ելավ տղին ծեծեց, թե. «Դու ես լցե թընդիրը, էն պզտի անասունն ի՞նչ է օր էդքան գնդերն ուտե»։

Տղեն էդտեղ քիչմ լացեց։ Մերը դուս հ'ելավ, մեկ էլ տան մեջը հավմ ման գուքար, տղեն տեսավ օր ախչիկը նորեն օրոցքեն հ'ելավ, էդ հավը բռնեց ու կերավ։

Մերն էկավ, տղեն ըսավ մորը.

— Մայրիկ, տիա՛ ախչիկը հավն էլ կերավ։

Մերը չհավատաց, նորից տղի վրա հերսոտավ, ըսավ.

— Ա՜յ ֆողը գլխուդ, էդ անասունն ի՞նչ է օր էդպես բան էնե։

Է՜հ, տղեն տեսավ օր զուր է, իրեն չպըտի հավատան, գլուխն առավ, կորավ։

Շատ գնաց, թե քիչ գնաց, շատ ու քիչը աստված դիտե, գնաց

մն քաղաքիմ ռաստ էկավ, տեսավ օր, ի՞նչ տեսնի, մե ղոճա քաղաքմ, հրմը հնչ մարդ չկա։ Նեաիսա, էս կողմը ման էկավ, էն կողմը ման էկավ, տեսավ օր մե մուխրմ գելնի, ինքն իրան ըսավ. «էրթամ հրլը էդ մուխը տեսնիմ, հրլպըտ էդտեղ մարդ կէղնի»։

Տղեն դնաց էդ մխի կուշտը, տեսավ օր մե բլրըլած տունմ կա, ներս մտավ, տեսավ օր էրկու հոգի, մարդ ու կնիկ, էրկուսի հ՚աչքն էլ քոռ, նստած էին։

Տղեն ըսավ.— Բարո՛վ հերիկ ու մեբիկ։

էդ մարդիկը մնացին զարմացած, թե էս ի՞նչրդ բան է, օր վիշապներու ահուն էստեղ մարդ է էկե։

էդ քոռ մարդը դարձավ տղին ըսավ.

— Ա՛յ տղա, ինս ես, ջինս ես, էս ի՞նչրդ էղավ, օր էստեղ էկար դու էստեղի վիշապների անունը չէի՞ր իմացե։

Տղեն ըսավ.— Չէ՛, ես դարիբ մարդ եմ, իմ հերս ընձի ծեծեց, տնից վրոընդեց, գլուխս առա, էկա ընկա էստեղ։ Հիմի թե գուզեք,— կըսե,— ընձի ձեզի տղա էրեք, էստեղ իրար հետ ապրինք։

էդ քոռը դարձավ տղին ըսավ.

— Շատ լավ, ես էլ գուզեմ էդպես էնեմ, հրմը մենք մեզի հրմար ապրուստ չունինք, էստեղ իրեք հատ վիշապ կա, էս քաղքի ու գեղերի մարդիկը թուփ են էրե, լցեր են մե մենձ տեղմ՝ սրով սրով կուտեն, մենք էրկուսս էլ մարդ ու կնիկ էինք, էրկուսիս էլ հ՚աչքերը հանեցին տարան, մեզի տվին էրկու հատ էծ, էրկու հատ էլ օշխար, օր կթենք, ուտենք ապրինք։

Տղեն կրսե.— Շա՛տ լավ, օր էդպես է, ես էդ օշխրրներն ու իծանը տանիմ կը հ՚արծրցրնեմ, բերեմ կը կթեմ՝ կուտենք, կապրինք։

էդ տղեն օր էդպես կրսե, էդ քոռերը կը համոդվին։ էդ տղին կէնեն իրենց տղա։ էդ տղի անունն էլ կէղնի Սուրեն։

Կրսեն.— Սուրեն ջան, օշխրրները տանելուս մուղաթ կեցի վիշապներուն ռաստ չգաս, տալտա տեղերով գնա ու արի։

Տղեն կառնե օշխրրները, կը տանի արծրցրնելու, մեկ օր, էրկու օր, իրեք օր էդպես, մեկ էլ մե օրմ կը տանի արծրցրնելու մե ծառիմ տակ, ինքն էլ կը նստի, մեկ էլ կը տեսնի օր մե ասլանմ վերևից դուքա։

Տղեն դյագինակը կառնի կայնի կ՚օր ասլանը օշխրրները չուտե։

Ասլանը էն տեղեն ձեն կուտա.

— Ա՛յ տղա, ինձնեն մի վախենա, տեսնիմ կ՚օր լավ տղա ես, էկեր եմ օր քեզի էրկու հատ լավ շուն տամ, օր օշխրրներդ պահես։

էդտեղ ասլանը գուքա կը ցկնի ու էրկու լակոտ կուտա ու կէրթա։

Հեքիաթի շուն էր, վով օր ամսով կը մենձընար, էդոնք օրով մենձըցան։ Մի տասնըհինգ օրվա մեջը դառան մե մե ղոճա ասլըններ։

Տղեն էնքան գուզեր էդ շներուն, օր խելքը կէրթար։ Մեկի անունը դրեց Զանգի, մեկինն է՝ Զրանգի։ Ամմեն իրիկուն օչխըրները կը բերեր տուն շներու հետ, առավոտուն կառներ կէրթար արծըցնելու։

Մե օրըմ նստեր շներու հետ յարանութեն կէներ, մեկ էլ շները հաչալով վազեցին։ Տղեն վեր թռավ, տեսավ օր մե արզահիլ վիշապմ գեմեն գուքա կը՝ հ'երկան մազերը հ'ետևեն քցած, սալլանա, սալլանա, թիլլանա, թիլլանա գուքար կը։

Շներն օր վրա պրծան, վիշապը էնդից ձեն տվեց։

— Ղուրպան քեզի, տղա, արի շներեն անցուր, գամ պըտի քեզի բան ըսեմ։

Հըմը տղեն վիշապին տեսնելու պաշտան, հասկըցավ, օր էդիկ է կերէ էդ քաղքի բիտտուն մարդոցը, հըմը Զանգի, Զրանգին օր քովն էին, հեչ չվախեցավ, գնաց շներեն անցուց, առավ էկավ, ծառի տակը նստան։

Վիշապը գուզեր օր մեկեն տղին վրա պրծըներ ուտեր՝ հըմը շներն օր տղի քովը կայնած էին ու վիշապի հ'երեսին կաշեին, սիրտ չէր էնե, հ'առկեքն էլ քիչմ քոռցեր էին, գուզեր օր սրեր։

Դաքութենով դարձավ տղին ըսավ.

— Տղա շան, ի՞նչ կէղնի քիչմ գլուխս քթվես։

Տղեն էլ, ինքը խելացի տղա, էն սհաթին կռայեց օր բանըմ կա, ըսավ.

— Շատ լավ, արի ծառի տակը, քթվեմ։

Տղեն վիշապի գլուխը դրեց ծնկին, հետեն աշեց, հետեն էդոր հ'երկան մազերը կապեց ծառին։ Վիշապը հեչ խապար չուներ, թե մազերը ծառին կը կապե, ինքը խարտոցով հ'առկեքը կը սրեր՝ օր տղին ուտեր։

Տղեն վիշապին հարցուց.

— Էդ ի՞նչ կէնես։

Վիշապն ըսավ.— Հե՛չ, կուտ կուտեմ։

Տղեն մազերն օր կապեց, պրծավ.— Վայ,— ըսավ,— մեկ կեցի, էծս փախավ, մեկ էրթամ դարձընեմ։

Վիշապն ըսավ.— Բան չկա, բան չի էղնի։

— Չէ, չէ,— ըսավ,— էծս կը կորի, էրթամ դարձընեմ, էլի գուքամ կաշեմ։

Տղեն օր հ'նլավ դնաց, վիշապը ուզեց օր հ'ետևեն զարկե՝ կուլ տտ, տեսավ օր մազերը կապած է ծառին։

Տղեն մահանա էծ էրավ, հ'ելավ քիչմ հեռուն կայնավ։

Վիշապն ըսավ.— Յա,— տղա ջան, մազերս ընչի՞ ծառին ես կապե, ես քեզի ի՞նչ էրի։

Տղեն կըսե.— Ես գիտեմ օր, դու էս քաղքի վիշապն ես, դո՛ւ ես հորս ու մորս հ'աչքերը տարե, ո՞ւրտեղ ես տարե, ըսա՛, բալնիքը տուր, թողնիմ։

Վիշապն ըսավ.— Բալնիքը օրթանճիլ քրոշս քովն է, թող ընձի, էրթամ բերեմ։

Տղեն էդ խոսքը հ'իմանալուն պես.— Զանգի, Զրանգի,— ըսավ,— էդոր էնպես կերեք, օր կաթմ արուն չմնա։

Զանգի, Զրանգին վրա ընկան, կտոր կտոր էրին, էնպես կերան որ, կաթմ արուն դետին չընկավ։

Անցավ մեկ հինգ-տասն օր, մեկ էլ տեսավ օր մե վիշապմ էլ էկավ, հըմը ի՞նչ վիշապ,— առաջվանից շատ մենձ ու զարզնգող։

Շները վրա պրծան վիշապին, վիշապը էնտեղից բոռաց.

— Տղա ջան, շներեն անցու, գամ պիտի քովդ բան ըսեմ։

Տղեն հասկըցավ, օր էսիկ էլ էնոր քուրն է, էլի շներեն անցուց, ուտրավ ծառի տակը, իրեն քովը նստեցուց։

Վիշապը զուգեր օր տղին ալ ու կուլ էներ՝ շներեն կը վախնար։ Շները իրանեն բեթար վիշապներ էին։

Էդ վիշապն էլ տղին աղաչեց, օր քիչմ գլուխը քթվե, տղեն ղաթի ուստա էր դառե, գիտեր, ըսավ. «Շատ լավ, բեր քթվեմ»։

Վիշապի գլուխը դրեց ծնկին, հետեն քթվեց, հետեն մազերը կապեց ծառին՝ էն մեկել վիշապի դայտին։ Մազերն օր ծառին կապեց, պրծավ, ըսավ.

— Վայ, էծս փախավ, էրթամ մե դարձընեմ, գամ։

Վիշապն էլ, քիչ էր մնացե, օր հ'առկեքը սրեր, պրծընիր, տղին ըսավ.

— Բան չի էղնի, բան չի էղնի, քիչմ էլ կեցի կէրթաս։

Տղեն ըսավ.— Դարձնեմ, էլի գուքամ, էծս կը կորի։

Տղեն օր հ'ելավ էրթըլու, վիշապը հ'ետևեն ուզեց օր վրա հասնի, կուլ տա, տեսավ օր մազերը ծառին է կապած։

— Վա՜յ,— ըսավ,— տղա ջան, մազերս ընչի՞ ես ծառին կապե, ես քեզի ի՞նչ եմ էրե։

Տղեն ըսավ.— Դու շատ բան ես էրե։ Հորս ու մորս հ'աչքերը հ՞ուրտեղ եք դրե, բալնիքը տուր, մազերդ թողնիմ։

Էդ վիշապն ըսավ.— Պզտի քրոջս քովն է։

Տղեն կըսե.— Ա՛յ ֆողը գլխուգ, պզտի քրրոջդ սատկեցուցեր եմ, դու է՞լ գուզես ընձի խափես։

Կըսե.— Օր էդպես է՝ մենձ քրոջս քովն է։

Կանչե կը շներուն կըսե.—Զանգի, Զրանգի, էղոր էնպես կերեք, օր կաթմ արուն գետին չ՚ընկնի։

Զանգի, Զրանգին էին, ֆորսի շներու պես կայներ էին, հըմը վրա պրծան, փարանց-փարանշ էրին, էնպես կերան, օր կաթմ արուն գետին չընկավ։

Էդ էլ էդպես գնաց։ Անցավ ամիսմ, էրկուս, մե օրմ տղեն նըստեր էր իրան համար փետ կը տաշեր, մեկ էլ շները հաչացին։ Գլուխը վեր վերցուց տեսավ օր, ի՞նչ տեսնի, մե էնպես վիշապմ գուքա, օր սար ու ձոր ոտքերի տակը կը թնդա։ Տղեն մտքի մեջն ըսավ. «էֆ՝, էս անիծածին դժար է սրպանելը»։ Կանչեց շներուն, էդոր շներն էլ խոսել գիտեին։

Ըսավ.— Զանգի, Զրանգի շան, լավմ դինշացեք, քիչմ կաթ կերեք, օր էս վիշապին կըռնանաք հաղթե, թե չէ էսիկ շատ յարամազ բան է, իրեքիս էլ կը վերշացընե։

Զանգի, Զրանգին ըսին.— Շատ լավ, գու արխեին կեցի։

Շները քաշվան մե կողք, վիշապը էկավ, ըսավ.

— Բարև տղա շան, էս դու հ՚ո՞ւրտից ես էկե, ի՞նչ կէնես։

Էդ տղեն ըսավ.— Հե՞չ, ես ֆիլան քոռ պառավընների տղեն եմ։

Վիշապը կըսե.— Շատ լավ, էնոնք իմ խնամիքս են։

Էկավ վիշապը, տղի քովը նստավ, գուզեր օր տղին ալ ու կուլ էներ՝ հըմը շներուց կը վախենար։

Էդ վիշապն էլ տղին ըսավ.— Արի մեկ գլոխս քթվե։

Տղեն էդոր մազերն էլ ծառը փաթթեց, ըսավ.

— Վա՞յ, էծս փախավ, մեկ կեցի, էրթամ դարձընեմ։

Տղեն օր հ՚ելավ, վիշապը գուզեր հ՚ետևեն հասներ կուլ տար, տեսավ օր մազերը ծառն էր փաթթած։

— Վա՞յ,— ըսավ,— տղա շան, ես քեզի ի՞նչ էրի, օր մազերըս ծառը փաթթեցիր։ Արի մազերըս քանդե, ես քեզի մե մենձ լավութենմ էնեմ։

Տղեն կըսե.— Քու լավութենդ ընձի պետք չէ, հորս ու մորս հ՚աչքերն օր հ՚ուրտեղ տարել ես, դրել ես, բալնիքը տու, գամ քանդեմ մազերդ։

Էդ վիշապը կըսե.— Էդոր բալնիքը պզտի քրոջս քովն է։

Կըսե.— Պզտի քրոջդ վերշացուցել եմ։

Կըսե.— Օրթանճիլ քրոջս քովն է։

Կրսե.— Օրթանճիլ քրոջդ էլ եմ վերշացուցեր։

Կըսե.— Էնտի՞ չեն էրևա։

Կը տեսնի օր իլլահ չկա, դուղն օր բալնինքը մահանա էնե, տղին կանչե քովը, օր հ՚առկեքով պատռտե։

Տղեն կըսե.— Չէ՛, էդտից թապլե։

Վիշապը ծոցեն կը հանե էրկու բալնինք, կը թապլե տղին, տղեն կըսե.

— Էսիկ հորն ու մորս հ՚աչքերու բալնինքը. էս քաղքի ու գեղերի մարդիքը հ՚ուրտեղ օր լըցրել եք, էնտեղի բալնիքն էլ տուր, մաղերդ քանդեմ։

Ինչ էնե վիշապը, ահուն ծոցեն կը հանե մե մենձ բալնիքմ էլ, կուտա։

Տղեն էն սըհաթին կը կանչե շներուն, կըսե.

— Զանգի՛, Զրանգի՛, էսոր էնպես կերեք, օր կաթմ արուն չընկնի դետինը։

Զանգի, Զրանգին էդ վիշապին կը վերշացնեն։

Տղեն կառնի շներուն, կէրթա կը տեսնի օր քաղաքի ղրաղը մե մենձ տունմ կա, ինքն իրան կըսե. «Վալլահ, իստեղ է մարդոցը լըցե»։ Էդ մենձ տան կողքըն էլ կէղնի մե լավ պզտի հ՚օդեմ։ Դու մի ըսե, վիշապների հ՚օդեն կէղնի։ Դուռը կը բանա էդ հ՚օդի, կը տեսնի օր հեչ մարդ չկա։ Կը տեսնի օր մե ղութիկմ դրած է, կը բանա տեսնի կօր հորն ու մոր հ՚աչքերն է, վերցընե չերը կը գնե։

Էնտից էլ կէրթա, էն մենձ տան դուռը կը բանա։ Էդոր ոտքի ձեննն օր կառնին էգտեղի մարդիկը կըսեն. «Էկան էլի, տեսնիս որիս պիտի տանին ուտեն»։

Տղեն օր դուռը կը բանա, նես կը մտնի, շենլիքը կը շվարին, կը մնան։

Կըսեն.— Ա՜յ տղա, վիշապները քեզի չտեսա՞ն, դու հ՚ո՞ւրտից էկար։

Տղեն կըսե.— Դուք հեչ մի՛ք վախենա, իրեք վիշապին էլ սըպաներ եմ։

Էգտեղի շենլըքին դուս կը հանե, քաղքըցի թե գեղացի, կէրթան իրանց տուն ու տեղին տեր կէղնին։

Էդ քաղաքը թագավորի քաղաք է էղե։ Թագավորին ու իրան տղոցն էլ վիշապները կերած պրծած են էղե։ Գուզեն օր էդոր տանին թագավոր էնեն։ Շենլիքը շատ կաղաչեն էդ տղին օր իրենց թագավոր էղնի, հըմը կըսե.— Կէղնիմ, մե մուրաղըմ ունիմ, էրթամ կատարեմ, գամ։

Կրսեն.— Ինչրդ օր գուզես։

Տղեն կէրթա հորն ու մոր քովը։ Էրկուսի հ'աչքերն էլ կը սաղցընեն ու գուզե էրթա իրա իսկական հոր գեղը, օր տեսնի, թե իրա ղովտ քուրը ինչ է էղե, սա՞ղ է, մեռած է։

Տղեն մնաս բարով կէնե իրան եսի հորն ու մորը, Զանգու, Զրանգուց մեկ-մեկ մազ կը քաշե, հետը կառնե ու կէրթա։

Կէրթա, կէրթա մե ճամփիմ ռաստ գուքա, կը տեսնի օր էրկու մարդ նստած հաց կուտեն։

Էդ մարդիկը կը հարցընեն.

— Ախպեր ջան, հ'ո՞ւրտեղացի ես, հ'ո՞ւր կէրթաս։

Էդ տղեն կրսե.— Ֆիլան դեղեն եմ, կէրթամ հորս ու մորս տեսնիմ։

Էդ մարդիքը իրար հ'երես կաշեն, կը խղճահարվին, կրսեն.

— Ախպեր ջան, էդ ձեր գեղն օր դու կրսես, էդտեղ էնպես ղովտմ է իճաթ էղեր, օր սաղ գեղ, քաղաք, բիտտուն կերեր է, մնացեր է ինքը։ Մեղք ես, դու մի' էրթա, քեզի էլ կուտե։ Մենք էլ էդ գեղցիցն ենք, փախեր ենք էդոր ձեռքեն։

Տղեն էն սրհաթը կը հասկընա, օր իրան քուրն է։

Կրսե.— Ես էդպեսներու շատերի հախեն եմ էկե, էդոր հախեն էլ գուքամ։

Էդ մարդիկը կրսեն.— Դու դիտես, մենք մեր պարտքեն պրծանք։

Տղեն էդոնց մնաս բարով կէնե, գընկնի ճամփա։ Կէրթա, կէրթա, կը տեսնի օր մե գեղմ կէրևա։ Դու մի ըսե, իրանց գեղն է, տղեն օր վաղուց հեռացել է՝ մտքեն հ'ելեր է։

Կէրթա էդ գեղը, տեսնի կօր հեչ իսան օղլի չի էրևա։ Կէրթա իրանց տունը, ներս կը մտնի, ձին կը քաշե գոմը, կէրթա տուն, կը տեսնի օր քուրը ահագին ղովտ է դառե, թնդիրը վառե, կողքը նստեր է։

Տղեն նես մտնելուն պես՝ քուրը վրա կը պրծնի, կրսե.— Բարով, ախպեր ջան, էս հ'ո՞ւր էիր, հ'ո՞ւրտից էկար, ձիո՞վ ես, ախպեր ջան։

Ախպերը կրսե.— Հա։

Ախպորը էդտեղ կը նստեցընե թընգրի քովը, կրսե.— Էրթամ ձիուդ խոտ տամ, գամ։

Ախպերը կրսե.— Գնա'։

Էդ ղովտը կէրթա գոմը, ձիու ոտների մեկը կուտե, գուքա տուն, ախպորը կրսե.

— Ախպեր ջան, ձիդ իրեք ոտնանի՞ է։

Ախպերը հասկնա կը բանը, կըսե.— Հա՛։

Քիչմ էլ իրար հետ կը խոսին, կէրթա ձիու իրեք ոտքն էլ կուտե։

Դուքա կըսե.— Ախպեր ջան, ձիդ առանց ոտքի՞ է էկել։

Ախպերը կըսե.— Հա՛։

Քիչմ էլ կը կենա, էդ ղովտը կէրթա ձին սաղ կուտե ու դուքա, կըսե։

— Ախպեր ջան, յայան[1] ես էկե։

Ախպերը կըսե.— Հա՛։

Քիչմ հ՚իրար հետ կը խոսին, էդ տղեն հ՚ինքն իրան կը մտածե, կըսե. «Ջանըմ, ձիս կերավ, հըմի սրեն էկավ ընձի, հ՚ելնիմ բալքիմ էդոր դլոխը մե քյալակմ խաղամ»։

Ղովտին կըսե.— Քուր ջան, կեցի մե էրթամ դուս ու դամ։

Տղեն դելնի հ՚երթիկը, քիչմ կը մտածե. «Ի՞նչ էնեմ, ի՞նչ չէ-նեմ»։ Բերե կը շալվարի մեջը մոխիր կը լըցնե, բերանը կը կապե ու հ՚երթըցեն կը կախե։ Դու մի՛ ըսե ղովտն էլ էդտեղ հ՚առկեքը կը սրե, օր ախպորը ուտե։

Ախպերն օր հ՚ելեր էր հ՚երթիկը՝ դուռը վրեն ախեր էր։ Ղովտը ձեռքը կը քցե օր դուռը բանա՝ հ՚ելնի հ՚երթիկ, ախպորը ուտե, կը տեսնի օր դուռը ախած է, թրոնի կ՚օր հ՚երթիկեն դուս դա, տեսնի կօր հ՚երթիկեն ոտքեր է կախված, բերանը կը քցե օր քաշե կուլ տա, շալվարը կը պատռի, մոխիրը հ՚աչքերը կը լցվի։ Էդտեղ ճվոց բռռոցը կը դնե, դուքա օր դուռը քաշե պոկե։ Էնե օր դուս պըտի պըրծընիր՝ ախպորը կուլ տար, Ջանգի, Ջրանդին ախպոր միտքը գըյնի։ Մազերը հանելուն պես՝ Ջանգի, Ջրանդին քովը կը կայնին։

— Հա՛, Սուրեն ջան,— կըսեն,— աշխարք շինենք թե քանդենք։

— Ո՛չ,— կըսե,— շինենք, ո՛չ քանդեք, էդ ղովտին էնպես կերեք օր կաթըմ արունը թողնեք։

Ջանգի, Ջրանդին վրա կը պըրծընին, էնպես կուտեն օր մեննակ մե կաթըմ արուն կը մնա գետնին։ Տղեն էդ արունը կը վերցնե, կը դնե իրա մահրմի մեջը, կառնի շներն ու կէրթա։

Կէրթա էն քաղաքն օր իրեն թագավոր պըտի էնեն։ Կէրթա, ճամ-փեն կը տեսնի օր եռսուն քառսուն մարդ թոփ են էղե մե փետիմ վրա, էդ փետի մեջն էլ լիքը օսկի է։ Վով օր էդ փետի անունը գտնի՝ էդ օսկին կուտան էդոր։ Դու մի սե էդ փետի անունը էդ տղի ղովտ քրոջ անունն է։ Տղեն կը կայնի էդտեղ, մե քանիմ բանի անուն էլ

---

[1] Հետիոտն (Ս. Կ.)։

ինքը կուտա։ Թիրտան մահրմեն կը հանե օր քիթը սրբե՝ կաթիլ արունը կը տեսնի, քուրը միտքը գըյնի։

Քրոջ անունն էլ Քյոքնաս կէղնի։ Տղեն վրա կը պրծնի, կըսե. «Քյոքնաս է էդ փետի անունը»։

Օսահաթ էդ փետը կը զարկեն, օսկին կը հանեն, կը տան էդ տղին։

Էդ տղեն գելնի գըյնի ճամփա, սարեր չափելով, ձորեր չափելով, ինքը յայան մարդ, տեյմոր կը հասնի էդ քաղաքը մոր ծըծվանքը[1] բերանը գուքա։

Հըմը քաղաք հասնելուն պես՝ քաղաքացիք դեմ դուքան, կառնին կէրթան թագավորի պալատը, էդոր կէնեն թագավոր։

Էդտեղից մե լավ, լսի կտոր ախչիկմ էլ դուզեն, կէնեն թագուհի։ Թերեն քառսուն զոր, քառսուն գիշեր հարսնիք կէնեն, էգոնց կը պսակեն։

Էնոնք կը հասնին իրենց մուրազին, դուք էլ հասնիք ձեր մուրազին։

Հ՚երկնքեն իրեք խնձոր հ՚իջավ, մեկն՝ ըսողին, մեկը՝ լսողին, մեկն էլ լավ հ՚անկաջ դնողին։

---

[1] Կերած կաթը (Ս. Բ.)։